## ԽՄՔԱԳՐԱԿԱՆ

## ԱՄԱՐՍԵ

Ուրիշ հին տարիներու նման հինցուցինք եւ Թաղեցինք 2020 Թուականը եւս, որուն ընթացքին աշխարհ դժբախտութիւնը ունեցաւ Քորոնա համաճարակի ովկիանին մէջ Թաղել երկու միլիոնէ աւելի զոհեր, եւ տակաւին ապագան դժբախտաբար մութ է եւ անորոշ։

Տարիները եւս նոր բացուող օրերուն նման կու գան մեզ ողջունելու, ապա մեզմէ բաժնուելու։ Իրականութեան մէջ չկայ հին կամ նոր այսօրը նոր է՝ երբ զայն կը բաղդատենք հինին հետ, իսկ հին՝ բաղդատած վաղուան։ Նոյնն է պարագան նաեւ մարդոց՝ 
որոնք գիտեն ինքզինքնին նորոգել։ Կան ծերունիներ, որոնք թարմ են ու երիտասարդ 
միտքով եւ սիրտով, մինչ անդին կան ժամանակէն առաջ ծերացած երիտասարդներ։ 
Առաջինները կ'ապրին այսօրը, մինչ երկրորդը՝ երէկը։ Մեր կամքէն անկախ ժամանակը 
կասիլ չի գիտէր, տարիները կու գան ու կ'երթան։ Ան որ չի գիտեր օգտուիլ ժամանակին 
իրեն պարդեւած պատեհութիւններէն, կը նահանջէ կեանքի մէջ ու ետ կը մնայ։

Բոլոր անոնք, որոնք 2020 Թուականին չկրցան իրականացնել իրենց երազներն ու հասնիլ իրենց ձգտած նպատակներուն, ահա 2021 տարին ձեզի կը ներկայացնէ նոր առիթ մը, իրագործելու ձեր ծրագիրները, երազները։ Նոր Տարուան առաջին օրը, հրաւէր մըն է մեզի համար կեանքը նորէն սկսելու։ Կեանքը լեցուն է անակնկալներով, ձախորդութիւններ կրնան երբեմն մեզ առաջնորդել յաջողութեան, այնքան ատեն որ չենք վհատիր եւ յուսահատիր։ Ամանորը մեզ կը լեցնէ նոր յոյսերով, նոր երազներով եւ նոր իղձերով։ Բայց միշտ ի մտի ունենալու է թէ յոյսին հետ մենք մեծ եւ անպայման կարիքը ունինք կամքի ոյժին եւ յարատեւութեան ոգիին, յաջողելու կեանքի պայքարին մէջ, առանց սակայն մոռնալու աղօթքի բաժինը, որ մարդուն հոգին կը մօտեցնէ Աստուծոլ։

ձետոյ, կեանքի իրա՛ւ եւ լի արժէքը տարիներու քանակով չէ որ կը չափուի միայն, այլ անոր ուրիշներու մեր ընծայած օգտակարուժեամբ։ Կեանքի յաջողուժեան իրաւ գաղտնիքը կը կայանայ ո՛չ ժէ միայն երկար ապրելով, այլ Աստուծոյ մեզի պարգեւած մեր կարճ կեանքը վերածել արդիւնաւէտ երկար կեանքի։ Յաջողուժիւնը ոչ ժէ երկար՝ այլ աւելի արդիւնաւէտ կեանք մը ունենալու մէջ է, գիտնալ մեզի տրուած ժամանակի իւրաքանչիւր վայրկեանին վրայ գուրգուրալ։ Որովհետեւ ժամանակը մեզի տրուած բացառիկ հարստուժիւն մըն է, որուն վրայ պարտինք գուրգուրալ։ Իր կեանքի աւարտին Շէյքսփիր ըսած է. «Ես ժամանակը վատնեցի, եւ հիմա ժամանակն է, որ զիս կը վատնէ»։ Մենք կրնանք մեր կեանքի իւրաքանչիւր վայրկեանը օրուան մը վերածել ե՛ժէ զայն ճիշդ ձեւով գործածենք, որովհետեւ «ժամանակը կարճ է եւ մենք աւելի կը կարճեցնենք գայն ի զուր վատնելով», կ՚րսէ Վիքժոր Հիւկօ։

Տարիներու Թիւը չէ որ կու տայ արժեչափը կեանքին, այլ աւելի մեր անոր միջոցաւ ուրիշներու ընծայած օգուտը։ Ի՞նչ պիտի արժէր ապարդիւն անցուած երկար տարիները, յաջողուժեան գաղտնիքը կը կայանայ ո՛չ Թէ երկար, այլ օգտաշատ եւ իմաստալից կեանք մը բոլորելու մէջ, եւ ասոր գաղտնիքը անշուշտ կը կայանայ իրա՛ւ արժէքը գիտնալ ժամանակին, որ մարդուն տրուած միա՛կ դրամագլուխն է։ Մարդկային
կեանքը իր զանազան հանգրուաններուն, պատանեկուժիւն, երիտասարդուժիւն, չափահաս տարիք եւ ի վերջոյ ծերուժիւն՝ ունի իրեն առաւելուժիւնները, որոնցմէ մենք

պարտաւոր ենք օգտուել գիտնալ։ Մարդ արարածը իր ծնած օրէն իսկ կեանքի զանազան շրջաններուն կատարելիք եւ ամբողջացնելիք պարտականութիւններ ունի նախ՝ իր անձին ապա նաեւ ընկերային շրջանակին համար։

2020 Թուականի վերջացող օրերու հուսկ պատգամն է կարեւոր դաս մը առնել մեր անցեալի օրերէն չկրկնելու մեր գործած սխալները, որոնք երբեմն կրնան ճակատագրական ըլլալ եւ անսրբագրելի, որոնց վրայ ետքը ողբալը այլեւս իմաստ պիտի չունենար։

Իսկ այս տարի, 2021-ի մեզի բերած պատգամն է, դրական, վառ ու լաւ յոյսերով դիմաւորել բացուող Նոր Տարին, լաւ տրամադրութեամբ ու խանդավառ հոգիով բարի գալուստ մաղթել անյայտին` 2021 թուականին, խնդրելով Աստուծմէ, որ մեզի եւս տայ դրական ու համբերող ոգի` հաշտուելու եւ համագործակցելու անյայտին` Ամանորին հետ։

## ԵՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ

6.U.U.

## **ՔԱՐԻՔ ԳՈՐԾԷ՛ ԵՒ ՋՈՒՐԸ ՆԵՏԷ**

Փոքրիկ, որբ տղայ մը, ձեռքը կողով մը հաւկիթ, շուկայ կը տանէր ծախելու, յանկարծ ճամբան կ'իյնայ ու բոլոր հաւկիթները կոտրուելէ զատ, ինք ալ ֆիզիքապէս կը վնասուի։ Անկասկած մարդ մը, իսկոյն կը վերցնէ տղեկը գետնէն եւ հիւանդանոց մը տանելով պէտք եղած բուժումը ընել կու տայ, կը վճարէ կոտրած հաւկիթներուն գինը, ուրախացնելով անոք երեխան։

Խեղճ տղեկը չափազանց զարմացած այդ անծանօնին իրեն ցոյց տուած անակընկալ օգնունենէն, կր հարցնէ անծանօն մարդուն.

- Դուն ո՞վ ես, Յիսո՞ւսն ես։

Մարդը կը պատասխանէ,

- Ո՜չ, ես սովորական մարդ մրն եմ։

Տղեկը կ'ըսէ,

- Դուն չես կրնար սովորական մէկը ըլլալ, որովհետեւ մայրս կ՚ըսէր, թէ Յիսուս միշտ մարդոց մէջ կը պտտի եւ իր շուրջ բարիքներ կը սփռէ, ահաւասիկ դուն ճիշդ իմ մօրս նկարագրած Յիսուսն ես։

Հայր Աստուած մեզմէ իւրաքանչիւրին անպայմանօրէն տուած է այդ բարիք գործելու յատկութիւնը, եւ Ամանորը, մանաւանդ այս 2021 թուականին, երբ Քորոնան միլիոնաւոր մարդկային կեանքեր խլեց եւ խախտեց այս աշխարհի բնականոն կեանքը, մեզմէ կ'ակնկալուի որ օգնութեան ձեռք երկարենք անկարներուն եւ փորձենք մխիժարել սգաւորները մեր կարելիութեան սահմաններուն մէջ։